ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐ - 10-րդ դասարան - 90 րոպե

1. Պնդումներից ո՞րն էճիշտ Մեսրոպ Մաշտոցի վերաբերյալ:
1) Մաշտոցը վերաձևավորել է հայոց այբուբենը, ոչ թե նորն է ստեղծել:
2) Մաշտոցը գրչագրել է իր ստեղծած այբուբենը:
3) Մաշտոցը հայոց այբուբենը ստեղծել է «Մեկ հնչյուն, մեկ տառ» սկզբունքով:
4) Մաշտոցն հույների և ասորիների հետ թարգմանել է «Աստվածաշունչը»:

2. V դարի պատմիչների մասին ո՞ր պնդումն է սխալ:
1) V դարի պատմիչները անդրադաձել են իրենց ժամանակի խոշորագույն իրադարձություններին:
2) Նրանք իրենց մատյանները գրել են առանց պատվերի:
3) V դարը համարվում է հայ գրականության Ոսկեդարը:
4) Ոսկեդարի պատմիչները օգտագործել են թե՛ գրավոր , թե՛ բանավոր տեղեկություններ:

3. Պնդումներից ո՞րն է սխալԱգաթանգեղոսի «Հայոց պատմության» վերաբերյալ:
1) Մատյանը հիմնականում ընդգրկում է Հայաստանում քրիստոնեական տարածման շրջանը:
2) Ագաթանգեղոսի մատյանը հարուստ է հրաշքի նկարագրություններով և պատկերավոր խոսքով:
3) Գրիգոր Լուսավորիչը Տրդատին բժշկում է Խորվիրապի բանտից:
4) Կերպարանափոխվելով խոզի՝ Տրդատը չի կորցնում իր մարդկային հատկանիշները:

4.Ո՞ր պնդումն է սխալ Փավստոս Բուզանդի վերաբերյալ:
1) Բուզանդը համարվել է հույն պատմիչ՝ նույնացվելով ազգությամբ հույն Փավստոս եպիսկոպոսի հետ:
2) Փավստոս Բուզանդը ժամանակագրական հաջորդականությամբ 5-րդ դարի մատենագրության չորրորդ դեմքն է:
3) Բուզանդի «Պատմությունն» ընդգրկում է 65 տարվա պատմություն՝ Տրդատ Մեծի որդի Խոսրով Կոտակից մինչև Հայաստանի բաժանումը (319-384թ.թ.)
4) Մատյանում լուսաբանված են Ներսես Մեծի ,Արշակ II-ի և Պապ թագավորի գահակալության տարիները:

5.Պնդումներից ո՞րն է սխալ Եղիշեի վերաբերյալ:
1) Եղիշեն իր աշխատությունը գրել է Մամիկոնյանց Դավիթ երեցի պատվերով:
2) Եղիշեն չի եղել իր նկարագրած դեպքերի մասնակիցն ու ականատեսը:
3) Եղիշեն ստեղծել է հատուկ ուրվագծված մի քանի կերպարներ՝ Վարդան, Վասակ, Հազկերտ . տեսանելի է նաև Եղիշեի կերպարը:
4) Եղիշեն կերտել է նաև հոգևոր հայրերի կերպարներ՝ Հովսեփ Վայոցձորեցի, Ղևոնդ երեց և այլք:

6.Ո՞ր պնդումն է սխալ Ղազար Փարպեցու վերաբերյալ:

1) Ղազար Փարպեցին գրել է միայն «Հայոց պատմություն» մատյանը:
2) Փարպեցու Պատմությունը ընդգրկում է 100 տարվա պատմություն:
3) Փարպեցին հիմնադրել է Էջմիածնի մատենադարանը և այն հարստացրել գրական բազմաթիվ աղբյուրներով:
4) Փարպեցին նկարագրել է Վահանանց պատերազմը ,. իր մատյանը շարադրել Վահան Մամիկոնյանի պատվերով:

7. Ո՞ր պնդումն է ճիշտ Խորենացու վերաբերյալ:

1) Խորենացին իր «Հայոց պատմությունը» սկսել է հայ ժողովրդի ծագումնաբանությունից և հասցրել մինչև իր ապրած ժամանակը:
2) Խորենացու «Հայոց պատմությունը» բաղկացած է 4 գրքից և «Ողբ» հավելվածից:
3) Խորենացին չի նշել այն աղբյուրները, որոնցից օգտվել է:
4) «Ողբ»-ում Խորենացին գովերգում է հայոց թագավորությունը, հիանում հայերի ստեղծարար աշխատանքով:

8.Պնդումներից քանի՞սն է սխալ«Սասնա ծռեր» էպոսի վերաբերյալ:

1) «Սասնա ծռեր» էպոսը հիմնականում ստեղծվել է միջնադարում՝ արաբական արշավանքների ժամանակ:
2) «Սասնա ծռեր» էպոսը հարուստ է առասպելաբանությամբ, չափազանցություններով:
3) «Սասնա ծռեր» էպոսի հերոսները միմյանց հետ կապված են սերնդակցությամբ:
4)) «Սասնա ծռեր» էպոսի բոլոր կին հերոսները նույնպես առաքինի և հայրենապաշտ են, ինչպես իրենց ամուսինները:

9.Պնդումներից ո՞րն է սխալ Փոքր Միհրի վերաբերյալ:

1) Փոքր Միհրը քաջաբար պատերազմում է Դավթի թշնամի յոթ թագավորների դեմ և հաղթում նրանց:
2) Փոքր Միհրը հեռանում է Բաղդադ և այլևս չի վերադառնում:
3) Փոքր Միհրը ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ, բայց մնում է անժառանգ:
4) Փոքր Միհրը սպանում է Չմշկիկ Սուլթանին և կոտորում է նրա զորքը՝ վրեժ լուծելով հոր մահվան համար:

10.Ո՞ր պնդումն է ճիշտ «Սասնա ծռեր» էպոսի կերպարների վերաբերյալ:

1) Էպոսում չկան բացասական կերպարներ, բոլոր կերպարները աշխատասեր ու հայրենասեր մարդիկ են:
2) Ժողովրդի ազատության ու բարօրության համար Սասնա քաջերը սուր են վերցնում և անձնազոհաբար կռվում թշնամիների դեմ:
3) Էպոսում չկա ոչ մի հերոս , որ մասնակցի բոլոր ճյուղերում:
4) Էպոսի կին հերոսներից ոչ մեկը չունի արքայական ծագում:

11.Ո՞ր պնդումն է սխալ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության » պոեմի վերաբերյալ:

1) Գրիգոր Նարեկացին իր «Մատյանի» շնորհիվ դարձել է միջնադարի խոշորագույն հայ բանաստեղծ և համաշխարհային գրականության անկրկնելի մեծություններից մեկը:

2) «Մատյան ողբերգության » պոեմը հետագայում կոչվել է «Նարեկ» և սրբացվել ժողովրդի կողմից:

3) Գրիգոր Նարեկացին բանադրվել է եկեղեցու կողմից և կարգալույծ արվել:

4) Գրիգոր Նարեկացին X դարի հայկական վերածնության հիմնադիրներից է և իր կենդանության օրոք մեծարվել է (ՈՒխտանեսի կողմից) «տիեզերական վարդապետ»:

12.Պնդումներից ո՞րն է սխալ Գրիգոր Նարեկացու «Տաղեր»-ի վերաբերյալ:

1) Նարեկացու տաղերը շարականների շարունակությունն են. տարբերվում են նրանցից իրենց բնապաշտությամբ և բանաստեղծական անկախությամբ:

2) Նարեկացին կրկնել է իր նախորդներին՝ այլաբանորեն երգեցլով բնության գեղեցկությունը:

3) Նարեկացու տաղերում մենք տեսնում ենք իրական կնոջը իր «թիկնեթեկին« քայլվածքով, իր աստվածային էությամբ՝ Աստվածածնի կերպարանքով:

4) Գրիգոր Նարեկացին իր տաղերով վիթխարի առաջընթաց քայլ է կատարել՝ հայ բանաստեղծությունը մոտեցնելով իրական կյանքին:

13.Ո՞ր պնդումն է սխալ միջնադարյան հայ գրականության վերաբերյալ:

1) Միջնադարը մեր մշակույթի ամենամռայլ շրջանն է:

2) Միջնադարյան հայ գրականությունը հարուստ է ժողովրդական ու գուսանական քնարերգությամբ, առավել տարածված են եղել հայրենները:

3) Միջնադարյան կրոնական տաղերում գովերգվել են երկնային տերը, Մարիամ Աստվածածինը, վերապատմվել են Աստվածաշնչի որոշ դրվագներ:

4) Միջնադարում՝ 12-13 րդ դարերում, հայ գրականության ժանր դարձավ առակագրությունը:

14.Ո՞ր պնդումն է ճիշտ վարքագրության վերաբերյալ:

1) Վարքագրությունը ստեղծվել է V դարում՝ հայ գրերի գյուտից հետո:

2) Հայ գրականությանը հայտնի է վարքագրության միայն մեկ օրինակ՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանը:

3) Հայ գրականության ամենահայտնի վարքագրությունը Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմի» մատյանն է:

4) Վարքագրությունը իր ուրույն տեղը չունի Ոսկեդարի գրականության մեջ:

15.Պնդումներից ո՞րն է սխալ հայ հին բանահյուսության վերաբերյալ:

1) Հայ հին բանահյուսությունն ընդգրկում է բազմահազարամյա մեր ժողովրդի հավատալիքներն ու հնագույն զրույցները, որոնք կոչվել են վիպասանք, առասպելներ, թվելյաց երգեր:

2) Մեծ Հայքի Գողթն գավառի երգիչները եղել են շատ նշանավոր, որոնց անվամբ էլ մեր հին հեթանոսական երգերը կոչվել են նաև «Գողթան երգեր»:

3) Հայ հին բանահյուսությունից մենք ծանոթանում ենք Հայոց դիցարանին:

4) Հայկական առասպելների հարուստ գանձարանից մեզ են հասել բազմաթիվ առասպելներ՝ Խորենացու շնորհիվ:

16. **Հաջորդականությամբ** նշել հայ հեթանոս աստվածների համարները։

1.Աֆրոդիտե, 2.Անահիտ, 3. Յանուս, 4.Աստղիկ, 5. Հերա,
6.Ապոլլոն, 7. Արամազդ 8.Պարիս։

17. **Հաջորդականությամբ** նշել այն տողերի համարները, որոնց հեղինակը Մովսես Խորենացին է։

1. Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ, Արամ, Տիգրան։
2. Վախը թերահավատության նշան է։
3. Լավ է կույր լինել աչքով, քան մտքով։
4. Քաջերի սահմանը իրենց զենքն է։
5. Բազում են կոչվածները, բայց սակավ են ընտրյալները։

18. **Հաջորդականությամբ** նշել այն ստեղծագործությունների վերնագրերը, որոնք գրել է Նարեկացին։

1. «Տաղ անձնական», 2. «Տաղ ի վերա վարդի և բլբուլի», 3. «Ողբ Եղեսիոյ»,
4. «Մեղեդի ծննդյանս», 5. «Տաղ հարության», 6. «Հավատով խոստովանիմ»,
7. «Տաղ Վարդավառի»։

19. **Հաջորդականությամբ** նշել Պատմահոր «Հայոց պատմության» գլուխները։

1. «Մեր պատմության ավարտը»,
2. «Մեր մեծերի ծննդաբանությունը»,
3. «Միջին պատմություն մեր նախնիների»։

20. **Հաջորդականությամբ** նշել այն թվերը , որոնք մատնանշում են Ագաթանգեղոսի պատմության կառուցվածքը։

1. «Հայաստան աշխարհիս փրկության դարձը»,
2. «Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը»,
3. «Հռիփսիմյանների վկայաբանությունը »։

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան